## ՄԵԾԱՆՈՒՆ ՎԱԽՃԱՆԵԱԼՔ ՑԱՄՍՆ 1875-1876։

ԿԱՐԼՈՍ ՈՒԻԹՈՒՈՐԹ, անգղիայի անուանի բնագէտ. մեռաւ 'ի Բարիզ։

ՖԻՐՊԷՆ ԹՈԹԷՆ, ախոյեան անկախութեան Պելճիոյ. մեռաւ 'ի Պրիւքսէլ 'ի հասակի 84 ամաց։ Ինքն եղաւ նորակազմ հայրենեաց առաջին քաղաքագէտներէն մէկն, ու շատ տարի ներկայացուց զայն 'ի Բարիզ։

ՍԻՐ ՈՒԻԼՔԻՆՍՆ, անգղիացի անուանի խուզարկու ճանապարհորդ յԵգիպտոս, և հեղինակ բազմաթիւ գրուածոց հնախօսութեան ու աշխարհագրութեան վրայ։ Մեռաւ 'ի Վիեննա 'ի հասակի 78 ամաց։

ԱՐՇԻԳՈՒՔՈՍ ՓՐԱՆՍԻՍԿՈՍ Ե, նախկին Դուքս Մոտենայի, ծնաւ 1 յունիսի 1849, և մեռաւ 'ի Վիեննա 20 նոյեմբերի 1875։ Քաջորդեց հօրն յամին 1846, Թողուց գահն 1848 թուին, նորէն դարձաւ 1849ին. տասը տարի ետքն հարկադրուեցաւ նորէն Թողուլ գահն ու մէյմ'ալ չդարձաւ՝ իր երկիրներն խուսափիլ Թագաւորութեան մասն անցնելով։ Երբոպիոյ բոլոր Թագաւորաց մէջ ինքը միայն չէր ճանչցած Նաբոլէոն Գ։ Առաջին հարուստ երկրատերանց մէկը կը համարուի. Թողուց 180 միլիոն ֆռանգի ստացուածք. զատակ չունենալով իր բնական ժառանգները կ'ըլլան երկու քորքն. մէկը Շամպորի կոմսուհին, միւսը Տոն Գարլոսի մայրը։

ՍԻՆՃԸՐ, ամերիկացի ճարտար արուեստաւոր, զոր արևելեալ ալ կը ճանչնան, կարելու մասնաւոր տեսակ մը գործիք հնարելուն համար։

ԿԱՐԴԻՆԱԼ ՍԻԼՎԵՍԹՐԻ, վենետացի բարեբար հայրենեաց։ Ծնաւ 13 փետրուարի 1803 և մեռաւ 'ի Հռոմ 19 նոյեմբերի 1875, ու կարդինալ եղեր էր 1838 թուին։ Բարութ հեզահոգի էր ու խանարհամիտ, և ամենեին քաղաքական խնդրոց մէջ չմտաւ. սիրող գեղեցիկ գպրութեանց։ Հօրենական հարուստ ժառանգութիւն ունեցած ըլլալով մաս մը ազգականացն հանեց ու մնացածն ամբողջ հայրենեացը բարեսրութեան տեղեաց բաշխեց։

ԿԱՐԴԻՆԱԼ ՈՒԱՇԷՐ Ցովսէփ Ոգդոմար իշխանաղուն արքեպիսկոպոս Վիեննայի և մետրապօլիտ Աւստրիոյ, ծնաւ 6 հոկտեմբերի 1797 և մեռաւ 'ի Վիեննա 20 նոյեմբերի 1875։ Կարդինալ եղաւ 1835 թուին։ Ինչանայի էր Եկեղեցւոյ Հարց մէջ բազմահմուտ գիտութեամբք, և բազմապատիկ առաքինութեամբք, որով մեծ յարգանք ու պատիւ կ'ընծայէին իրեն Աւստրիոյ մայրաքաղաքացիք։

ՈՒՈՔԷՐ (Walker) Ամերիկացի նշանաւոր տնտեսագէտ. մեռաւ 'ի հասակի 76 ամաց։

ՎԻՐԳԻՆԻԱ ԹԷՅԱԶԷ (Déjazet) անուանի դերասանուհի, մեռաւ 'ի Բարիզ 'ի հասակի 78 ամաց։ Ինքնդհաւ 69 տարի թատերաց վրայ անցուց իր կեանքը, և շատ երեւելի էր էրիկ մարդու դեր խաղալուն մէջ։ Հասաւ 'ի ծերութիւն չքաւոր և լի պարտուք, այնպէս որ ասկէ երկու տարի առաջ կոյուս ըսուած լրագիրն անոր օգնելու համար գիշերահանդէս մը կազմեց, որ 100000 ֆրանգ մուտք տուաւ։

ՈՒԻԼՍՈՆ Հենրիկոս, փոխնախագահ Միացեալ-Նահանգաց Ամերիկոյ, և նախագահ ժողովոյ ծերակուտին. ծնաւ յամին 1812 'ի Ֆարինկտոն և մեռաւ 22 նոյեմբերի 1875։ Առաջ հողագործ ծառայ էր, ետքը կօշկակար եղաւ մինչև 28 տարեկան հասակը. ցորեկները կօշիկ կը կարէր, գիշերներն ուսումն կ'ընէր. ետքէն քաղաքագիտութեան տուաւ ինքը զինքն ու գերեթափութեան ախոյեաններէն մէկն եղաւ։

ԴԷՐԱԿՈՍ Աբրահամ Տրլա կենրոնէր, մեռաւ 'ի Բարիզ 21 դեկտեմբերի 1875 'ի հասակի 59 ամաց։ Նշանաւոր գրագէտ և լրագրագիր էր. գրագիտութեան ասպարիզէն անցաւ 'ի ժողով ծերակուտին Գաղղիոյ, և յետոյ զրկուեցաւ դեսպան 'ի Կոստանդնուպօլիս, և եղաւ վերջին դեսպան կայսրութեան 'ի Բարձրագոյն Դուռն։ Մտերիմ էր և ճարտար գրիչ խորհրդոց Նաբոլէոն Գ կայսեր։

ՄԱՐԳԷԶ Սէն-Ժորժ, գաղղիացի եղերերգակ մատենագիր, և գլխաւոր գործակից Սգրիպի. մեռաւ 'ի Բարիզ, 26 դեկտեմբերի 1875։

digitised by A.R.A.R.@

ՄԱՌԻՇԱԼ ԼԸՎԱՑԵԱՆ, գաղղիական բանակին նշանաւոր զօրավարներէն մէկն էր, մանաւանդ 'ի մասին զինուորական ճարտարպետութեան. մեռաւ 'ի հասակի խոր ծերութեան այս յունուարի 19։

ՄՈԼ (Mohl), գաղղիացի նշանաւոր արեւելագէտ և նախագահ ասիական ընկերութեան, որ Եւրոպիոյ գիտնական կաճառներուն մէջ երեւելի տեղին ունի։ Մոլի գրուածոց մէջ անուանի է իր քննութիւնը Պարսկաստանի վրայ, Թարգմանութիւնն Շահ-Նամէ պատմական բանաստեղծութեան, որ կենդանի լոյս մը կը ծագէ հին Իրանայ և արիական աւանդութեանց վրայ։

ՓՐԵԴԵՐԻԿ ԼԸՄԷԴՐԸ, գաղղիացի անուանի դերասան։

ԼՈՐՏ ՍԴԷՆՀՈՓ (Lord Stanhope), անգղիացի քաղաքագէտ և նշանաւոր պատմաբան, որ շատ տարի Հնագիտաց կաճառոյն նախագահ եղաւ, Բրիտանական մուզէոնին (Brithish Museum) տնօրէններէն մէկն էր, և գլխաւորապէս իրեն արդիւնքն է կենդանագիրներու ազգային պատկերանոցը (Galerie)։ Մեռաւ 'ի հասակի 71 ամաց, 24 դեկտեմբերի 1875։

ԿԱՆՈՆԻԿՈՍ ՅՈՎՍԷՓ ԳԱԲԲԻԷԼԼԷԴԴԻ, վենետիկեցի բազմահմուտ և բազմարդիւն մատենագիր, որ էր միանգամայն հայագէտ և հայասէր. ու այլեւայլ գրուածքով ու թարգմանութեամբք ծանօթացուց Իտալիոյ մեր ազգին թէ եկեղեցական և թէ քաղաքական պատմութիւնը։ Մեռաւ 2 փետր. 1876։

ԿՈՄՍ ՓՐԱՆԿԻՍԿՈՍ ՄԻՆԻՍԳԱԼԳԻ ԷՐԻԶԶՈՅ, վերոնացի ազնուական արեւելագէտ, և զարգացուցիչ աշխարհագրական գիտութեանց յիտալիա։

ՓՐԱՆԿԻՍԿՈՍ ԴՈԼՑԻ, հունգարացի նշանաւոր պատմաբան։

ԿԱՐԴԻՆԱԼ ՄԱԹԻԷՕ, արքեպիսկոպոս Պըզանսոնի. ծնած էր 'ի Բարիզ 30 յունուարի 1796։

ԺԸՆՈՒՅԵԱԴ, արքեպիսկոպոս Լիոնի, բազմահմուտ եկեղեցական մատենագիր։

ՍԷՏԻՑԵՆՈՑ, նշանաւոր արեւելագէտ, քարտուղար Վարժարանին Գաղղիոյ (Collége de France)։

ՔՈՒՐՈՒՇԳԻՆ, ռուս անուանի մատենագիր։

ԴԻՐԱԿՈՄՍ ԳԱՍՏԻԼՀՈՅ, բորդուգէզ նշանաւոր գրագէտ։

ԲԷՇԷԼ, գերմանացի աշխարհագիր։

ԱՆՏԷՐՍԷՆ, դանիմարգացի բանաստեղծ և վիպասան։

ԱՎԸՆԷԼ, գաղղիացի անուանի գրագէտ և վերակեցու Բարիզու Սէնդ-Ժընէվիէվի գրատան։

ԲԵՌՆԱՐԴ ՊԱՑԼ, անգղիացի եղերերգակ մատենագիր։

ՊԱՐՈՆ ԼԷՈՆԱՐՏԻ, գերմանացի պատմաբան և դասատու փիլիսոփայութեան։

ՊԻԷՌ ԼԱՌՈՒՍ, գաղղիացի հեղինակ ընդհանրական մեծ Բառագրոց (Grand Dictionnaire Universel)։

ՈՆԵՍԻՄ ԼԸՌՈՒԱ, գաղղիացի եղերերգակ մատենագիր։

ՄԻՆԵԸ, գաղղիացի քահանայ, հիմնարկու լրագրին Univers catholique, որ վերջէն փոխուեցաւ ու եղաւ Univers ծանօթ լրագիրը, և տպագրող եկեղեցական գրոց իբր 2000 հատոր։

ԿՈՄՍ ԴՈԼՍԴՈՅ, ռուս անուանի մատենագիր։

ԼՈՒԻ ԳՈՆՍԴԱՆ, գաղղիացի մատենագիր Մոգութեան և Քաղդէութեան վրայ։

ԱԼՓՈՆՍ ՌՈՒԱՅԷ, գաղղիացի եղերերգակ մատենագիր և տնօրէն Opéra թատրոնին։

ՓՐԵԴԵՐԻԿ ՏԷՇԱՆ, գաղղիացի եղերերգակ մատենագիր։

ԳՐԷԴԻՆՈՅ-ԺՈԼԻ, գաղղիացի անուանի եկեղեցական պատմագիր։

. ՕՑԻԿԱՆ, գաղղիացի տնտեսագէտ և դասատու 'ի Պահարանն արուեստից և ձեռագործաց (Conservatoire des Arts et Métiers)։

ՋԱՔԱՐԻԱ, դասատու հասարակաց իրաւանց 'ի Կէօդդինկէն և անդամ Աւագաժողովոյն Բրուսիոյ։

Ֆ. ՄՈՆԻԷ, նախկին դատախարակ Նաբոլէոն կայսերական իշխանին։

ԳԱՌՆԷ, կաճառորդ Ճեմարանին Գաղղիոյ. նշանաւոր մատենագիր։

ԱՆՏՐԱԼ, գաղղիացի բազմահռչակ բժշկապետ։

digitised by A.R.A.R.@